Մխիթար Գօշն իւր Դատաստանագրքի ՃԻԱ գլխում (մասն Ա.)։ Օժիտի գաղափարի աստիճանական զարգացման դուզընթաց սկսեց քայքայուել հարսի գնման սովորութիւնը, որը յետագայ սոցիալ-տնտեսական գործոնների ճնշման տակ այլևս անկարող էր արդի հասարակական պայմաններում իւր գոյութիւնը պահպանել։ Այսպիսով՝ ժամանակի ընթացքում հարսի գնման՝ գլխագնի սովորութիւնը շատ տեղերում իսպառ չքացաւ, տեղի տալով մի նոր հիմնարկութեան՝ օժիտի սովորութեանը։

Հարսի գնման վճարից օժիտի կամ բաժնքի գոյանալը 'ի հարկէ կատարուել է երկար էվոլիւցիօնի ընթացքով, ուստի իւր բնաւորութեամբ օժիտի էութիւնը տարբեր աստիճաններ է ներկայացնում։ Մի տեղ մենք տեսնում ենք, թէ ինչպէս օժիտի և հարսի գլխագնի հիմնարկութիւնները հաւասար իրաւունքով միաժամանակ ծաղկում են ժողովրդական սովորութիւններում. մի այլ տեղ օժիտի ներկայութիւնը շնորհիւ իւր նորութեան տակաւին ոչ մի քաղաքացիութիւն չի գտել. և ընդհակառակն այն բոլոր տեղերում, ուր գլխագնի սովորութիւնն իսպառ վերացել է, այնտեղ օժիտի գաղափարը գերիշխող դիրք է բռնել և այնքան ինքնուրոյն բացառիկ բնաւորութիւն է ստացել, որ շատ գիտնականներ ճգնում են ապացուցանել, որ օժիտի գաղափարը միանգամայն անկախ է գլխագնի գաղափարից ու առաջ է եկել միանգամայն այլ պայմաններից։ Այդ պատճառով և ժողովրդական սովորութիւնների ուսումնասիրութեանց բազմաթիւ աշխատութիւնների մէջ օժիտի գոյացման ու էութեան մասին տիրում են զանազան թեր ու դէմ կարծիքները։

Նպատակ չունենալով ծանրաբեռնել ընթերցողներիս ուշադրութիւնն արդի իրաւագիտութեան մէջ օժիտի գոյացման ու զարգացման վերաբերեալ լոյս տեսած տեսական հայեացքների քննութեամբ, շատանում ենք շեշտելու մեր այն կարծիքը, որ հակիրճ կերպով արտայայտեցինք փոքր ինչ վերը։ Օժիտի սովորութիւնը մենք ընդունում ենք իբրև

Հայ մատենագրության թուանշային գրադարան